ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (IRZ) ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

29.09.2021 18:04

ՀՀ փաստաբանների պալատը 29.09.2021թ Եվրոպական միության և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ կազմակերպել է վերապատրաստման դասընթաց «ՀՀ քրեական նոր օրենսգիրքը» թեմայով:

Դասընթացի նպատակն է բարելավել արդարադատության որակը Հայաստանում, ինչպես նաև.

- տեղեկացնել ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նոր ինստիտուտների և հայեցակարգերի մասին,
- պարզաբանել ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նոր հասկացությունները և դրանց կիրառելիությունը պրակտիկայում,
- լուսաբանել ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված պատժելիությանն առնչվող առանձնահատկությունները,
- պարզաբանել ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված որոշ հանցագործությունների տեսակների հետ կապված նորամուծությունները:

Սեմինարը վարում էր ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Աննա Մարգարյանը, սեմինարին մասնակցում էր նաև միջազգային փորձագետ Օթիլիա Պակուրարին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })